ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ
№2024-7-4-Ա

ք. Երևան 22.08.2024թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2024 թվականի օգոստոսի 22-ի նիստում քննարկեց 2024 թվականի ապրիլի 30-ին արտոնագրային հավատարմատար Ալեքսանդր Նահապետյանի կողմից ներկայացված "SYSTEME ELECTRIC" Joint Stock Company ընկերության (ul. Dvintsev, d.12, k.1, etazh 6 pom I kom 15 RU-127018 Moscow, RU) «e» (IR1680273) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

Միջազգային ծանուցման մեջ նշված՝ 9-րդ, 16-րդ, 25-րդ, 35-րդ և 42-րդ դասերի ապրանքների և ծառայությունների համար ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան վերոհիշյալ դասերի ապրանքների և ծառայությունների համար միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող «e» (Bora Creations S.L. Calle Velázquez, (Pto. de Andratx), 11 E-07157 Andratx Baleares (ES), IR 1065074, 1232921, 1083089, 1233257) և «e» (EXPERIAN TECHNOLOGY LIMITED The Sir John Peace Building, Experian Way, NG2 Business Park Nottingham NG80 1ZZ (GB), IR 1383128) շփոթելու աստիճան նման համակցված ապրանքային նշանների առկայության պատճառով: ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 115-րդ կետի, 130-րդ և 131-րդ կետերի համաձայն ապրանքային նշանը համարվում է այլ նշանին շփոթելու աստիճանի նման, եթե այն ընդհանուր առմամբ զուգորդվում է դրա հետ (այսինքն մարդու (միջին սպառողի) մոտ առաջացնում է նույն պատկերի, բառի, գույների, դրանց համակցության, իմաստի ընկալման զգացողություն), չնայած առանձին տարբերությունների առկայությանը: Ապրանքային նշանների նմանության առավել

ընդհանուր չափանիշը տնտեսական շրջանառության ընթացքում սպառողի կողմից դրանք շփոթելու հնարավորությունն է: Նշանի նմանությունը որոշելիս հաշվի է առնվում, որ սպառողը, որպես կանոն, հնարավորություն չունի համեմատելու երկու նշանները, այլ առաջնորդվում է նախկինում տեսած նշանի մասին ունեցած ընդհանուր տպավորությամբ: Տվյալ դեպքում համեմատվող բոլոր ապրանքային նշանները զուգորդվում են միմյանց հետ նմանատիպ ոճավորում ունեցող «e» տառով:

Կոլեգիայի նախագահը նշեց, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան վերոհիշյալ դասերի ապրանքների և ծառայությունների համար միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող «e» (Bora Creations S.L. Calle Velázquez, (Pto. de Andratx), 11 E-07157 Andratx Baleares (ES), IR 1065074, 1232921, 1083089, 1233257) և «e» (EXPERIAN TECHNOLOGY LIMITED The Sir John Peace Building, Experian Way, NG2 Business Park Nottingham NG80 1ZZ (GB), IR 1383128) շփոթելու աստիճան նման համակցված ապրանքային նշանների առկայության պատճառով:

Բողոքարկողի ներկայացուցիչը պնդում էր, որ բողոքը պետք է բավարարվի:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կայացված որոշումը իրավաչափ է:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում 7 կողմ և 1 դեմ ձայների հարաբերակցությամբ.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Ալեքսանդր Նահապետյանի կողմից ներկայացված "SYSTEME ELECTRIC" Joint Stock Company ընկերության «e» (IR1680273) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մերժել, փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ